

вспомнить похвальные статьи Абегиана М., Манвеляна Л., Агаяна Г., Ширванзаде о творчестве Туманяна. Они предугадали некоторые особенности и оттенки поэтического мира Туманяна, которые позднее стали основами тщательного изучения, глубокого и фундаментального анализа.

Summary
**LITERARY CRITICISM AND TOUMANIAN IN THE 90s
 OF XIX CENTURY**
 E.Zh.Mnatsakanyan

The article focuses on the appraisals towards Toumanyan's works in the 90s of the XIX century which reveal not only the developmental trends in Toumanyan's works but also in the thought of the time. Merging with journalism and public speaking of 90s criticism of the time was gradually trying to decide on its field of study, aims and objectives. For unbiased criticism, led only by the criteria of fine art, time was necessary. Different phenomena had different acceptance from the side of criticism. Different currents, opinions collided. Of course, this doesn't mean that there wasn't professional criticism in the field. It's enough to remember the highly appraisal of Toumanyan's works in the articles by M. Abeghyan, L. Manvaelyan, Gh. Aghayan, Shirvanzade. These highlighted some peculiarities and shades in Toumanyan's poetic world, which later served as a basis for deep and foundational analysis.

**ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ
 «ԱՆՅՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ» ՎԵՊԻ ԺԱՆՐԸ**

«Մեհեան»-ի առաջին համարում տպագրված «Գրական հանգանակ»-ում Կոստան Զարեյանը շարադրում է գրականության նորոգման իր ծրագիրը, որին նա հավատարիմ է մնում գրական կյանքի ողջ ընթացքում: Հանգանակի կետերից մեկը՝ «Ինքնուրոյնութիւն եւ անձնականութիւն ձեւի մէջ», հետաքրքիր դրսևորում է ունենում մանավանդ նրա գեղարվեստական արձակում: Այս առումով քննենք «Անցորդը եւ իր ձամբան» վեպի ժանրային առանձնահատկությունները:

Ամենից առաջ աչքի է ընկնում դասական վեպին բնորոշ պատումի բացակայությունը: Ճիշտ է, «Անցորդը եւ իր ձամբան» վեպում կա գործողության որոշակի ընթացք. Անցորդը իր ընտանիքով վերադառնում է հայրենիք՝ այստեղ հիմնավորվելու մտադրությամբ, բայց իշխանության անհանդուրժողական քաղաքականության պատճառով երկու տարի հետո հեռանում է: Սակայն վեպի նպատակը ամենևին էլ հերոսի ընտանիքի ողիսականի պատմությունը չէ, այլ ներկայացնել 20-ականների Հայաստանը, ձանաչել ժողովրդին, փնտրել ու հասկանալ հայի էության գաղտնիքը: Այս փնտրտուքը հեղինակին ստիպում է անդրադառնալ և՛ մեր պատմությանը, և՛ մշակույթին, և՛ այլ երկրների՝ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքին, ինչպես նաև Հայի՝ սեփական երկրի և այլ ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքին: Ողջ վեպի ընթացքում հեղինակի պատումը տարբեր երանգներ է ստանում. այն երբեմն ինքնակենսագրություն է, երբեմն՝ հետազոտություն, երբ գրողը քննում է մեր պատմությունը՝ օգտագործելով դեպի Հայաստան և Հայաստանում ձամփորդելու հնարավորությունը: Հեղինակը խորհրդածում է, փիլիսոփայում: Կարելի է եզրակացնել, որ Հայաստանում լինելը և հայ մարդուն ձանաչելը Զարեյանին հնարավորություն են տալիս իրագործելու հիմնական նպատակը՝ ներկայացնել իր խոհերը հայ մարդու մասին, մեր երկրի ու նրա մշակույթի յուրօրինակության մասին: Իր մտքերն ու զգացմունքները գրողը չէր կարող պարփակել դասական վեպի սահմաններում, քանի որ այդ դեպքում չէր կարողանա հասնել իր գերագույն նպատակին՝ ընթերցողին մղել տեսնելու,

զգալու, հասկանալու, թե ինչ են Հայաստանը և հայ ժողովուրդը և իր հետ միասին ապագայի ուղիներ փնտրել:

Միգուցե դա է պատճառը, որ «Անցորդը եւ իր ծամբան» վեպի մասին տարաբնույթ կարծիքներ են հնչել:

Այն կարելի է դասել հուշագրությունների շարքը, ինչպես Շ.Պերպերյանն է նշում¹, քանի որ Ջարյանը հետադարձ հայացք է գցում իր հետ կատարվածի վրա՝ անցկացնելով իր զգացմունքների միջով և ներկայացնում որպես իր ապրածի վերլուծություն: Սակայն Պերպերյանի մոտեցումը չի ընդունում Ա.Ավագյանը: Նա գրում է, որ վեպը «կարելի է հուշագրության ժանրի ստեղծագործությունների թվին»² դասել, հետո ձշտում է. «Ջարյանի խոսքը նկարագրական չէ և ոչ էլ «պատձենահանական», որով հայտնի չափով բնորոշվում են հուշագրական գործերը: Նրա ողջ պատումը կրակված հոգու արդյունք է, քննադատական բուռն խոսքի արտահայտություն: Գրողը, ինչպես ինքն է խոստովանում, այստեղ գրուցում է ոչ այնքան ընթերցողի, որքան ինքն իր հետ: Հաճախ էլ այն տպավորությունն է ստացվում, թե Ջարյանն այս գործը ոչ թե գրել է գրականություն ստեղծելու, այլ իր խորհրդածություններին հորձանք տալու համար»³:

Վեպը հնարավոր է նաև ինքնակենսագրական համարել, քանի որ գլխավոր հերոսը հենց ինքը՝ հեղինակն է: Վարդան Մատթեոսյանի կարծիքով «Անցորդը եւ իր ծամբան» վեպը կարելի է ուղևորավեպ որակել. ««Ուղևորավեպ» պայմանական բառը թերեւս լաւագոյն բնորոշումն է այս գործին, որ իր հետեւորդը ունեցած չէ եւ ոչ ալ աւանդութիւն ստեղծած է, որովհետեւ Ջարեանի աշխարհայեացքը խորթ էր հայկական ըմբռնումին»⁴: Գրողի ստեղծագործությունների վերլուծաբաններից Մարկ Նշանյանը նույնպես վեպը համարում է ծանապարհորդագրության ժանրին պատկանող ստեղծագործություն. «Ջարեանի մեծութիւնը տարիներ յետոյ՝ գրական ընդունուած ձեւերուն մէջ չէ որ պիտի յայտնուէր, բանաստեղծութեան, վէպին կամ թատրոնին (թէ-եւ առաջին երկուքը յամառօրէն մշակած է ինք մինչեւ կեանքին վերջը), այլ փորձագրութեան մարզին մէջ: Աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել

1 Պերպերյան Շ., Կ.Ջարեան՝ յավերժական ծանբորդը, «Բագին», ԺԺ տարի, թիւ 5, 1980, մայիս, Պէյրութ:

2 Ավագյան Ա., Կոստան Ջարյան. Կյանքը և գործը, Երևան, 1988, էջ 170:

3 Նույն տեղում:

4 Մատթեոսեան Վ., «Կոստան Ջարեանի շուրջ», 1998, Անթիլիաս-Լիբանան, էջ 361:

«Ծանապարհորդագրութեան» մարզին, զոր Ջարեան հասցուցած է բնազանցական համեմատութիւններու, ծանապարհորդութիւնը դարձնելով հոգեկան պեղում, աշխարհներու յայտնագործում ու տիեզերական ոյժերու գրառում: Այդ բնազանցական ծանապարհորդագրութեան ժանրի պատկանող գործերն են «Անցորդը եւ իր ծամբան» կամ «Երկիրներ եւ Աստուածներ»»⁵:

Կ.Ջարյանի արձակ գործերում, մանավանդ քննվող վեպում, չափազանց շատ են Հայաստանի նկատմամբ սիրո քնարական զեղումները, փիլիսոփայական խոհերը համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի տեղի ու դերի մասին, Հայաստանի ապագայի, հայ մարդու նոր որակի մասին: Միգուցե սա է պատճառը, որ Դ.Գասպարյանը կարծում է, թե վեպը խոհագրության ժանրին է պատկանում. «Այս երկը ժանրով խոհագրություն է, մտորումների գրառում՝ արած իր համար և ուղղված ընթերցողին»⁶:

Ա.Ավագյանը «Անցորդը եւ իր ծամբան» ստեղծագործությունը որակում է նաև որպես գեղարվեստական վավերաթուղթ. «Ջարյանի արձակը ժանրային առումով թերևս կարելի է բնութագրել որպես գեղարվեստական վավերաթղթի արտահայտություններից մեկը մեզանում, մի բան, որի բացակայության մասին հայ գրականության մեջ խոսում էր Շ.Շահնուրն իր «Վավերաթուղթը» հոդվածաշարում»⁷:

Ժ. Քալանթարյանը գրում է. «Առաջին ծավալուն գործը՝ «Անցորդը և իր ծամբան» երկը, որ վերլուծական արձակ է՝ հուշագրության շրջանակում, լույս տեսավ 1926-1928 թվականներին Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում: Երկն ունի կենսագրական բնույթ, որովհետև գրողը պատկերում է իր կյանքի ուղին՝ 1922թ. Պոլսից դուրս գալու օրից մինչև Խորհրդային Հայաստանից հեռանալը»⁸:

Վ.Գաբրիելյանը, խոսելով Կ.Ջարյանի ստեղծագործությունների մասին, գրում է. «Տարագրության տարիներին սփյուռքահայ մամուլում Ջարյանը հանդես եկավ մի շարք էսսեներով («Բանկոռպը և մամուլի ոսկորները», «Երկրներ և Աստվածներ», «Անցորդը» և այլն): Հուշագրության բնույթի այս գործերում, չնայած մի շարք վրիպումներին, Ջարյանը հասավ լուրջ հաջողությունների»⁹: Արշակ Զոպանյանը «Ան-

5 Նշանեան Ա., Կոստան Ջարեան. Անկարելի թատրոնը, «Բագմավեպ», 1994, էջ 178:

6 Գասպարյան Դ., «Կոստան Ջարյան», Ե., «Կանչ», 1999, թիվ 44:

7 Ավագյան Ա., «Կոստան Ջարյան. Կյանքը և գործը», Ե., 1998, էջ 55:

8 Քալանթարյան Ժ., Կոստան Ջարյան, Հայ գրականություն 12, Ե., 2011, էջ 13:

9 Գաբրիելյան Վ., Դիմանկարներ, Ե., 1976, էջ 48:

ցորդը եւ իր ծամբան» ստեղծագործությունը համարում է հոգվածաշարք. «...Պոսթրնի Հայրենիքին մէջ սկսաւ հրատարակել *Անցորդը եւ իր ծամբորդը* տիտղոսով յողուածաշարքը»¹⁰:

Անդրադառնալով Կ.Ջարյանի որոշ ստեղծագործությունների՝ Հ.Օշականը այս վեպի մասին գրում է. «Տպաւորապաշտ այդ էջերուն դժուար է ձշմարիտ գրական տարազ մը պատշաճեցնել. անոնց մէջ Կ.Ջարեան դիտող է, ստեղծող է, պատմող է, դատող է, հեզնող, դիւցազնաշունչ սլաքներու սպասարկու և ամէն բանէ առաջ գրական *thema*ներու նորոգիչ մը»¹¹:

Այսպիսով, գրողի ստեղծագործության մեկնաբանները տարբեր կերպ են ընկալում վեպի տեսակը և բազմապիսի որակումներ տալիս: Ուրեմն, Ջարյանի ստեղծագործությանը դասական մոտեցում հնարավոր չէ կիրառել (ինչպէս նշում է Հ.Օշականը), քանի որ մի տեսակը թափանցում է մյուսի մեջ, մի քանի մեթոդներ համադրվում և հանդես են գալիս միասին:

Խոսելով 20-րդ դարի 90-ական թվականների վեպի մասին՝ Ս.Աբրահամյանը ներկայացնում է դասական վեպի քայքայման ընթացքը, որի առանձնահատկություններից նշում է հետևյալը. «...Արդի արծակում իշխում են պատումի և ոճի պայմանականությունը, այլասերումը և փոխակերպումը, խորհրդանիշը և ինտելեկտուալ վիպումը: Ուրեմն՝ նկարագրությունը և գործողությունը մղվում են երկրորդ պլան, պատումը դառնում է դրվագային»¹²:

Վերը նշվեց, որ «Անցորդը եւ իր ծամբան» վեպում բացակայում է դասական վեպին բնորոշ պատումը: Այստեղ տեսնում ենք հեղինակին՝ իր խորհրդածություններով, փիլիսոփայական դատողություններով, ում համար կարևորը ասելիքն է, իսկ ձևը՝ ընդամենը միջոց: Այս հանգամանքը անուղակիորեն նշում է Մ.Նշանյանը, հաստատում են Վ.Մատթեոսյանը և Հ.Օշականը. «Ջարեան ուզելով կը մտածէ, այսինքն՝ կեանքէն դուրս է, հետեւաբար՝ անպատասխանատու. իր ընդհանրացումները կը բխին դուրսէն, ո՛չ թէ կեանքէն, որում մէկ շերտի վրայ լարած է իր վրանը»: Սա մեջբերում է Հակոբ Օշականի նամակից՝ ուղղված Բ.Թաշչյանին¹³: Հետաքրքիր է Վ.Մատթեոսյանի մեկնա-

10 Չոպանեան Ա., Քրոնիկ, «Անահիտ», 1930, թիւ 4, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 108:

11 Օշական Յ., Հայ գրականութիւն, Երուսաղէմ, 1942, էջ 603:

12 Աբրահամյան Ս., Տեքստ և բնագիր, Ե, 2010, էջ 16:

13 Մատթեոսեան Վ., Կոստան Ջարեանի շուրջ, Անթիլիաս, 1988, էջ 361:

բանությունը. «Ջարեանը կեանքը անցուցած է երեակայութեան բովէն, գայն իր մտածողութեան ենթարկելու համար: Իր ստեղծածը վեպի դասական հասկացողութեան քայքայումն է»¹⁴:

Խոսելով ժամանակակից վեպի մասին՝ Ս.Աբրահամյանը գրում է. «Փիլիսոփայական հղացումը գրողին «հեռացնում» է իրերի աշխարհից դեպի վիպական պայմանականություն: Վիպական տեքստը, սակայն, իբրև ամբողջություն, ձգտում է ժանրի «հիշողության» և պայմանականի համադրության մեջ արտահայտել իրականը, պատմականը և հավիտենականը»¹⁵: Ճիշտ է, Ս.Աբրահամյանի՝ վիպական տեքստի քննությունը 20-րդ դարի 80-90-ական թվականների վեպերին է վերաբերում, բայց այդ նույն ընթացքը՝ դասական վեպի քայքայումը և նոր տեսակի վեպի ձևավորումը, տեսնում ենք Կոստան Ջարյանի և՛ «Անցորդ»-ում, և՛ «Բանկօօպը եւ մամուփի ոսկորները»-ում:

Ի մի բերենք: Այն, որ վերլուծաբանները «Անցորդը եւ իր ծամբան» վեպի տեսակի մասին տարբեր կարծիքներ են հայտնում, պատահական չէ: Իրոք, վեպը և՛ հուշագրություն է, և՛ խոհագրություն, և՛ վերլուծություն, և՛ ուղեգրություն... Գրողն ընտրել է մտքերն արտահայտելու յուրօրինակ ձև, որի շնորհիվ էլ կարողացել է ընթերցողի հետ երկխոսության մեջ մտնել և նրան ապրեցնել իր գաղափարներով: Արդյունքում՝ վեպի տարբեր ժանրային առանձնահատկությունները մեկտեղվել են և ձևավորել վեպի նոր տեսակ, որը կարելի է համադրական անվանել, ժամանակակից վեպի ժանրային առանձնահատկությունների սաղմերը երևում են Կոստան Ջարյանի նշված վեպերում:

Հնարավոր է, որ ինքը՝ գրողը, ամենևին էլ չի մտածել վեպի նոր տեսակ ստեղծելու մասին, այլ ընդամենը հետևել է այն պատկերացմանը, որ «...ամէն արվեստագետ պարտի ըլլալ ինքնուրույն և անձնական ձևին ու խորքին մեջ իր գրվածքներուն: Որովհետև, հարկ է ըսել տակավին, արվեստը՝ հայտնատեսական ստեղծագործության եղանակով, իրականացումն է ներքին եսին, որով ո՛չ մեկ նախանշանակալ ազդեցություն կրնա թույլատրելի ըլլալ»¹⁶:

Բանալի բառեր. Մեկնաբանություն, ժանրային առանձնահատկություններ, նոր տեսակի վեպ, վերլուծաբան, պատում, անհանդուրժողական քաղաքականություն:

14 Լույն տեղում, էջ 361:

15 Աբրահամյան Ս., Տեքստ և բնագիր, Ե, 2010, էջ 17:

16 Ջարյան Կ., Մեր հանգանակը, «Մեհեան», Կ.Պոլիս, 1914, հ. 1:

"Прохожий и его путь": жанр романа.

В 1914 году вышел в свет первый номер журнала "Мегьян", в котором была напечатана статья "Литературный завет", один из пунктов которого гласил индивидуальность и самобытность в литературной форме.

В художественной литературе Костана Зарьяна, в особенности в произведении "Прохожий и его путь", это требование получило интересную интерпретацию. Здесь отсутствует самый важный элемент классического романа - сказ. Писатель придал значение сказу, а форма для него всего лишь способ.

Уникальная структура романа подтолкнула аналитиков давать различные характеристики этому произведению - мемуары, биографический роман, путевые записи, размышления...

По мнению автора статьи, это синтетический тип романа, который представляет собой разложение структуры классического романа и содержит семена современного романа.

Ключевые слова: Интерпретация, жанровые особенности, роман нового вида, аналитик, сказ, неприемлимая политика.

**Summary
Anahit Hovhannisyán**

The genre of the novel "The Traveler and His Road"

One of the items of "Literary Contribution" (published in 1914 in the first publication of the magazine "Mehian") is "In the Form of Independence and Personality", which has an interesting reflection in the prose of Kostan Zarian, especially in the novel "The Traveler and His Road". The most important element of a typical classic novel, narrative is missing here. The writer noted the importance of the message, and the form is only a way for the writer to send the message to the reader. Following the unique structure of the novel, different analysts characterize this novel as memoirs, biographical novel, etc. According to the author of the article, "The Traveler and His Road" is a synthesized novel; it is the decomposition of the classic novel and contains the seeds of the genre of the modern novel.

Key words: comment, genre features, a new kind of novel, analyst, narrative, intolerant politics.

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՄՈՂԵՌՆԻՍԱԿԱՆ ՎԵՊԸ**

Մկրտիչ Արմենի՝ խորհրդային գրականագիտության կողմից «մոդեռնիստական» պիտակված, ոչ մի անգամ չվերահրատարակված «Երևան» (1931) վեպը քսաներորդ դարի հայ վեպի պատմության կարևորագույն իրողություններից մեկը համարվելու բոլոր նախադրյալներն ունի այն իմաստով, որ խորհրդահայ վեպի իսկապես առաջին մոդեռնիստական նմուշն է: Պակաս կարևոր չէ նաև, որ այս վեպը ետին թվով մատնանշում է զարգացման այն ուղիներից մեկը, որ կարող էր բռնել հայ վեպի կայացման ընթացքը, եթե չլիներ սոցոեալիզմ կոչված համահարթեցումը: Ինչ-որ իմաստով Արմենի վեպը պատմություն է հենց այդ համահարթեցման մասշտաբների մասին, թեև իբրև մոդեռնիստական վեպ հրաժարում է պատմություն պատմելու դասական ավանդույթից: Հայաստանի խորհրդայնացումից հետո Երևան քաղաքի կառուցումը վեպի հերոս՝ Լենինգրադում ուսանած (պատահական չէ հերոսի՝ ձարտարապետական բարձր արվեստն ու ինքնատիպությունը խորհրդանշող քաղաքում ուսանած լինելու այս հանգամանքը) ձարտարապետ Արշակ Բուդաղյանի կողմից ավերում է ընկալվում: «Նա սոսկաց: Երևանը... հռչակավոր արևելյան այդ քաղաքը... իսկ ինչո՞ւ: Ո՞ւմ է հարկավոր վանդալային այս ավերածությունը: Մի՞թե կարելի է քանդել Եգիպտոսի արքայական հովիտի պիրամիդները, նրանց տեղը լվացքատուն կառուցելու համար: Նույնիսկ Արամ Գնունին կոսակա այդ մտքից: Էլ ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ է քանդում նա այս հնադարյան քաղաքը, գեղեցիկ Եգիպտական պիրամիդների պես, նրանց պես հին և անկրկնելի...»¹: Ահա և հիմնական պատճառը, որ Արմենի վեպը խորհրդային շրջանում ոչ մի վերահրատարակություն չունեցավ՝ ակնհայտ հակադրությունը նոր հասարակարգի կառուցումն իբրև վիպական խնդիր հռչակած սոցոեալիզմին: Քանդվում է Հին Երևանը, փոխարենը կառուցվում նորը. կործանվում է Արևելքը, որ նրա ավերակների վրա բարձրանա Արևմուտքը: Մշակութային մի ամբողջ շերտի, կենցաղի, բարքերի, մարդկային հարաբերությունների

1 Արմեն Մ., Երևան, Մ., «ԽՍՀՄ ժողովուրդներ», Կենտրոնական հրատարակչություն, 1931, էջ 89: